

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 3 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն (վերլուծություն)
2. Առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների:
3. Առկա համակարգի ուսանողների առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում
4. Առկա չորրորդ կուրսերի մանկավարժական/արտադրական/, ուսումնական պրակտիկաների անցկացման վայրերի հաստատում՝ ըստ ուսանողների և դասախոսների:
5. «Անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ», «Ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ» և «ԳՊՄԻ-ում ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգ» ներքին իրավական ակտերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ
6. Ուսուցման հեռակա համակարգի «Ինֆորմատիկա» բաժնի և առկա համակարգի մաթեմատիկա 3-րդ կուրսի ուսումնական պլանում փոփոխությունների կատարման առաջարկություն

7. Ֆիզմաթ ֆակուլտետի կողմից մարզի ավագ դպրոցներում
մասնագիտական կողմնորոշման ուղղված միջոցառումների ցանկ
8. Ընթացիկ հարցեր

Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

1. ԼՍԵՑԻՆ - Մ. Մարգարյանի հաղորդումն Ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ. Մարգարյանը, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

Մ. Մարգարյանը ներկայացրեց ֆիզմաթ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ֆակուլտետի 2013-2014 ուստարվա կատարած աշխատանքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի կուրսային աշխատանքները՝ ըստ ուսանողների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի կուրսային աշխատանքները՝ ըստ ուսանողների:

3. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի ուսանողների առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել առկա համակարգի ուսանողների առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերը:

4. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա չորրորդ կուրսերի մանկավարժական/արտադրական/, ուսումնական պրակտիկաների անցկացման վայրերը՝ ըստ ուսանողների և դասախոսների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ. Մարգարյանը, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել առկա չորրորդ կուրսերի մանկավարժական/արտադրական/, ուսումնական պրակտիկաների անցկացման վայրերը՝ ըստ ուսանողների և դասախոսների:

5. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումը «Անհատական աշխատանքների

կազմակերպման ընթացակարգ», «Ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ» և «ԳՊՄԻ-ում ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգ» ներքին իրավական ակտերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ներկայացման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆեսորներ Մ. Սարգսյանը և Հ. Դրմեյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել հետևյալ դիտողություններն և առաջարկությունները.

- 1) «Անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ»
 - 2.1.-ի վերջում ավելացնել «ինտերնետային պաշարներ»
 - 3.1.-ի վերջին նախադասությունը «ուսանողը պետք է» արտահայտությունը տեղափոխել 3.2.1.-ի սկիզբ
 - 3.2.1.-ում ուղղել «տեքստի գլխավոր....» արտահայտությունը

- Էջ 3-ում «... գ) լրահավաք սեղմնագիր...» արտահայտությունից հանել «սեղմնագիր»-ը
- Էջ 3-ում «կոնսպեկտում» արտահայտությունը փոխարինել սեղմնագրում արտահայտությունով
- Էջ 3 և 4-ում ուղղել «հիմնականում» և «անհատական» արտահայտությունները
- Էջ 4-ում «հայրանվան տառերը» փոխարինել «հայրանվան սկզբնատառերը»
- 3.5.2.-ի վերջին նախադասությունը փոխարինել «Անհատական աշխատանքում ուսանողը ներկայացնում է իր վերլուծական վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ»
- 3.6.1.-ում ավելացնել «... ներկայացվում է համակարգչային շարվածքով» արտահայտությունը
- 3.6.1.-ում խմբագրել «... հայերեն լեզվի տառատեսակը վերցնել Arial Armenian, ռուսերենի համար՝ Arial LatRus, իսկ անգլերենի համար՝ Times New Roman»
- 3.6.2.- վերջին նախադասությունը խմբագրել «... իր վերնագիրը՝ համակարգչային շարվածքի Bold (թավ) և Underline (ընդգծված) ոճերով»
- 3.7.1. խմբագրել «... աշխատանքը դասախոսին թղթապանակով, իսկ նրա էլեկտրոնային տարբերակը՝ որևէ կրիչով»
- 3.7.4.-ի ա) և բ) կետերում միավորներից առաջ դրված « ,»-ը հանել, իսկ գնահատումը կատարել $10+30+10+10+10+30= 100$ բաղադրիչներով
- «Հավելված 2»-ում ուղղել կետադրական նշանները

2) «Ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ»

- 1.6.-ում անորոշ է «... տվյալ առարկայի...» հասկացությունը
- 2.2. կետն ավելորդ է

- 2.3.-ում ավելացնել «... և ղեկավարի ընտրություն»
- 2.11.-ում հեռացնել «թվային» բառը
- 2.18. և 2.21. գրախոսման երկու էտապները միավորել մեկում
- 2.24 և 2.25 կետերում նշված ժամանակները հակասող են- թողնել նրանցից մեկը
- Ուղղել տառասխալները

3) «ԳՊՄԻ-ում ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգ»

- 3.1.-ում փոխել «... մինչև 20 ուսանող...»
- 3.8.-ում պարզաբանված չեն « ուսանողի թղթապանակ» և « ուսանողի անձնական տվյալների բազա» տերմինները
- 3.9.-ում հանել « արտասուսումնական» արտահայտությունը

6. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն ուսուցման հեռակա համակարգի «Ինֆորմատիկա» բաժնի և առկա համակարգի մաթեմատիկա 3-րդ կուրսի ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆեսոր Հ. Դրմեյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, Գ.

Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ինստիտուտի գիտական խորհրդում առաջարկություն ներկայացնել ուսուցման հեռակա համակարգի «Ինֆորմատիկա» բաժնի և առկա համակարգի մաթեմատիկա 3-րդ կուրսի ուսումնական պլանում մասնակի փոփոխություններ կատարելու համար, այն է՝ ելնելով ներքոհիշյալ մասնագիտական առարկաների յուրահատկություններից,

որպես ընթացիկ ստուգման ձև սահմանել անհատական աշխատանքը՝
գրավոր ստուգողական աշխատանքի փոխարեն.

1. ԷՀՄ-ի ծրագրային ապահովում
2. Քումիյութերային ցանցեր,ինտերնետ,մուկտիմեդիա
3. Ինֆորմացիոն համակարգեր
4. Առարկա ըստ ընտրության (Համակարգչային գրաֆիկա,Տվյալների հենքեր)
5. Ընդհանուր ֆիզիկա (մաթեմատիկա 3-րդ կուրս)

7. ԼՍԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումը ֆիզմաթ ֆակուլտետի կողմից մարզի
ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ուղղված միջոցառումների
ցանկի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Ս. Մարգարյանը, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, դոցենտ Ա.
Ֆարմանյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Որոշեցին արտաքին կապերի բաժին ներկայացնել ֆակուլտետի կողմից
մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ուղղված
միջոցառումների ցանկը:

Ֆիզմաթ ֆակուլտետի խորհրդի կողմից ներկայացվեց մասնագիտական
կողմնորոշման ուղղված միջոցառումների հետևյալ ցանկը.

№	Միջոցառման տեսակը	Դպրոցները	Իրականացման ժամկետները	Պատասխանատուները
---	----------------------	-----------	---------------------------	------------------

1.	Հաճախել մարզի դպրոցներ, ծանոթացնել շրջանավարտներին և ֆակուլտետում գործող մասնագիտություններին և նյութատեխնիկական բազային	Ֆոտոն և Ակադեմիակա և վարժարաններ, թիվ 1,2,3,26,37 դպրոցներ	15.10.14-01.05.15	Ֆարմանյան Ա., Մարգարյան Մ., Դրմեյան Հ.,
2.	Մարզի ավագ դպրոցների աշակերտների համար լաբորատոր աշխատանքների ցուցադրում	ԳՊՄԻ Հենակետային վարժարան, թիվ 1,2,3,26,37,42	01.04.15-30.04.15	Դրմեյան Հ., Սելքոնյան Ա.
3.	Ընդունելության քննության ծրագրերի շրջանակներում կազմակերպել անվճար պարապմունք մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից	Շիրակի մարզի ավագ դպրոցներ	15.10.14-01.06.15	Մարգարյան Մ, Դրմեյան Հ. , Սերոբյան Ե., Մանուկյան Ա., Հարությունյան Ն., Մուրաֆյան Մ., Աթոյան Ա.

4.	Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոսների ուժերով կազմակերպել բաց դասեր ավագ դպրոցների ավարտական դասարաններում:	Շիրակի մարզի ավագ դպրոցներ	15.11.14-15.05.15	Մարգարյան Մ, Դրսեյան Հ. ,Սերոբյան Ե., Մանուկյան Ա., Հարությունյան Ն., Մուրաֆյան Մ., Աթոյան Ա.
5.	Այցեր Շիրակի մարզի ավագ դպրոցներ՝ «Մասնագիտական կողմնորոշում» սոցիալական հարցում իրականացնելու նպատակով	Շիրակի մարզի ավագ դպրոցներ	26.01.15-15.02.15	Սիմոնյան Թ. Սահակյան Ա.
6.	Աշակերտների համար «Մեկ օր ԳՊՄԻ-ի ուսանող» միջոցառման անցկացում:	Ֆոտոն և Ակադեմիակա ն վարժարաններ, ԳՊՄԻ Հենակետային վարժարան	09.02.15-15.02.15	Սիմոնյան Թ. Սահակյան Ա.

8. ԼՍԵՑԻՆ- Տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.թ. դոցենտ Թ. Սիմոնյանի ելույթն այն հարցի մասին, որ ֆակուլտետում գործում է ֆիզմաթ գիտությունների մեջ չներառվող «Կառավարում» մասնագիտությունը , որի ուսանողների թիվը մեծ տոկոս է կազմում ֆակուլտետում: Բացի այդ ինստիտուտում բացվող նոր մասնագիտությունների մեջ գրացված է հաշվապահապան հաշվառում և ֆինանսներ բաժինները: Ուստի առաջարկում է, որ ֆակուլտետի անվանման մեջ արտահայտվի «Տնտեսագիտություն» մասնագիտությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Մարգարյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, դոցենտ Ա. Ֆարմանյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, դոցենտ Թ. Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Դիմել ինստիտուտի խորհրդին ֆիզմաթ ֆակուլտետը վերանվանել ֆիզիկա-մաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետ

Ֆիզմաթ ֆակուլտետային
խորհրդի նախագահ`

Մ. Մարգարյան

Ֆիզմաթ ֆակուլտետային
խորհրդի քարտուղար`

Ա. Սահակյան

27.10.2014 թ.